ՄՏՔԻ, ԽՈՍՔԻ, ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Օրենքը նման է սարդոսպայնի՝ փոքր միջատները խճճվում են նրա մեջ,
իսկ մեծերը պատռելով անցնում են
Մոնտեսքյո

Արտահայտվելու կամ մտքի, խոսքի ազատության իրավունքը ժողովրդավարական հասարակության էական հիմնասյուներից է, առանց որի դժվար է պատկերացնել քաղաքացիական հասարակության ցանկացած ինքնադրսևորում: Այս ամենն ուղղակի կապված է նաև տեղեկատվության ազատության հետ, որոնց ամբողջությունն էլ հասարակությանը վերապահում է «հսկիչի» դեր՝ երկրում կատարվող իրադարձությունների նկատմամբ: Ազատ խոսքով մտքերն արտահայտելու, ինչպես նաև ազատորեն տեղեկատվություն փնտրելու, ստանալու, տարածելու իրավունքը բոլոր ժամանակներում եղել և մնում է իշխանությունների «թշնամին»: Հենց այդ պատճառով է, որ շատ, թե քիչ զարգացած պետություններում խոսքի, տեղեկատվության ազատությունը կարգավորվում է օրենքով՝ տալով դրանց իրացման երաշխիքներ:

Իրազեկ քաղաքացին ձեռքը պահում է երկրում կատարվող իրադարձությունների, իշխանությունների գործողությունների զարկերակին, վերահսկում է կոռուպցիոն դրսևորումները, պաշտոնեական դիրքի չարաշահումները, օրենքի և իրավական այլ ակտերի կամայական կիրառումները և այլն, հետևաբար, նա «վտանգավոր» է իշխանության համար: Միևնույն ժամանակ, տեղեկացված քաղաքացին վերը նշված իր գործողություններով խթանում է պետական կառավարման մարմինների արդյունավետությունն ու օգտակարությունը, նպաստում է երկրում օրինականացման հաստատմանը:

Մտքի, խոսքի ազատության իրավունք

Միտքը մարդու անբաժան հատկություններից է, նրա գործողությունների հիմքն ու առանցքը: Ֆրանսիացի փիլիսոփա Ռենե Դեկարտը դեռևս 17-րդ դարում բնորոշել է այն, ասելով, որ դատողության հավաստիության հիմքը մտածող սուբյեկտի գոյությունն է: Հենց այստեղից էլ առաջացել է նրա՝ ***«Մտածում եմ, հետևաբար գոյություն ունեմ»*** հանրահայտ հիմնադրույթը[1]:

Եթե մարդն ապրում է, ապա մտածում է: Կարո՞ղ եք մի պահ չմտածել. նման բան հնարավոր չէ: Հենց մտածելով է պայմանավորված մարդու գոյությունը, վարքագիծն ու ինքնադրսևորման եղանակները: Մարդը մտքով է ընկալում շրջապատող իրերն ու երևույթները, դրանց վերաբերյալ ձևավորում իր գնահատականը, իսկ խոսքով՝ արտահայտում դրանց վերաբերյալ իր կարծիքը: Սակայն, այնպես չէ, որ ազատ խոսքն «անձեռնամխելի» է և հնարավոր չէ այն

[1] Ս. Զաքարյան, «Փիլիսոփայության պատմություն», Երևան «Նաիրի» 2000թ, էջ 193

ճնշել, հարկադրել փոխել այն, կամ՝ ստիպել հրաժարվել սեփական կարծիքից կամ դիրքորոշումից: Դրա վառ օրինակը մամուլի վրա ճնշումներն են (այդ թվում՝ տարբեր ձևերով արտահայտվող գրաքննությունը), նախաքննական մարմնի կողմից վկաների, տուժողների կամ՝ հանցագործություն կատարելու մեջ կասկածվողի նկատմամբ ճնշումները և այլն:

Ազատ խոսքը ճնշելը, բռնություն գործադրելը պարտադիր չէ միայն ֆիզիկական ուժ գործադրելով կատարվի: Մարդուն հոգեբանորեն ընկճելը, սպառնալը, շանտաժի ենթարկելը, վախեցնելը ևս բռնության դրսևորումներ են:

Մարդու կարծիքը և համոզմունքը կազմում են նրա ներաշխարհը, որոշում են նրա անհատականությունը: Արգելվում է մարդուն հարկադրել հրաժարվել իր կարծիքից կամ փոխել այն: Յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր կարծիքը և համոզմունքն արտահայտելու անարգել, և ո՛չ պետությունը, ո՛չ պաշտոնատար անձինք, ո՛չ հասարակական կազմակերպությունները, ո՛չ հանրության անդամները և որևէ մեկը, ով էլ որ լինի, չեն կարող մարդուն հարկադրել արտահայտելու իր կարծիքը և համոզմունքը կամ հրաժարվելու դրանցից [2]:

Որքան էլ կարևորենք ազատ խոսքի, արտահայտվելու, մտքեր փոխանակելու իրավունքը, այնուամենայնիվ այն բացարձակ իրավունք չէ և կախված իրավիճակից կարող է սահմանափակվել: Այս ազատությունների իրականացումը, քանի որ այն կապված է պարտավորությունների և պատասխանատվության հետ, կարող է պայմանավորվել այնպիսի ձևականություններով, պայմաններով, սահմանափակումներով կամ պատժամիջոցներով, որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, տարածքային ամբողջականության կամ հասարակության անվտանգության, անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու, առողջությունը կամ բարոյականությունը, ինչպես և այլ անձանց հեղինակությունը կամ իրավունքները պաշտպանելու, խորհրդապահական պայմաններով ստացված տեղեկատվության բացահայտումը կանխելու կամ արդարադատության հեղինակությունն ու անաչառությունը պահպանելու նպատակով[3]:

Խոսքի ազատության չարաշահումը կարող է նույնքան վտանգավոր լինել, որքան այդ իրավունքի սահմանափակումը, հետևաբար այն չի կարող անվերջ ճկվել՝ սպառնալիք ստեղծել կամ վնաս հասցնել անձանց, հասարակության և պետության շահերին: Ազատ խոսքը ևս սահմաններ ունի և այդ «կարմիր գիծը» հատելը կարող է վնաս հասցնել այլ անձանց իրավունքներին:

ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածը նախատեսում է խոսքի ազատության օրենքով նախատեսված սահմանափակում ***«եթե դա անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում պետական անվտանգության, հասարակական կարգի պահպանման, հանցագործությունների կանխման, հանրության առողջության ու բարոյականության, այլոց սահմանադրական***

---

[2] ՀՀ Սահմանադրության մեկնաբանություններ /ընդհանուր խմբագրությամբ՝ Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի. - Եր. «Իրավունք», 2010, էջ 304

[3] Մարդու իրավունքների և հիմնարարար ազատությունների պաշտպանության մասին Կոնվենցիա, հոդված 10, մաս 2-րդ:

իրավունքների և ազատությունների, պատվի և բարի համբավի պաշտպանության համար»:

Երբեմն էլ սահմանափակումները պայմանավորվում են քաղաքական իրավիճակի թելադրանքով և անհարկի միջամտում, խոչընդոտում են իրավունքի իրացմանը՝ անտեսելով հասարակական և առաջ տանելով անձնական շահը:

Ազատ խոսքի դրսևորումներից մեկն էլ քննադատությունն է, որը հատկապես քաղաքական գործիչների համար հավասարազոր է «սպառնալիքի»: Մարդու Իրավունքների Եվրոպական Դատարանը (ՄԻԵԴ) իր նախադեպային որոշումներով բազմիցս շեշտել է. ***«Քննադատության ընդունելի շրջանակները քաղաքական գործիչների նկատմամբ, համապատասխանաբար, ավելի լայն են, քան մասնավոր անձանց նկատմամբ: Ի տարբերություն վերջիններիս՝ քաղաքական գործիչները անխուսափելիորեն և գիտակցաբար բաց են իրենց յուրաքանչյուր խոսքի և արարքի մանրակրկիտ քննարկման համար, ինչպես լրագրողների, այնպես էլ լայն հանրության կողմից և, հետևաբար, պետք է դրսևորեն հանդուրժողականության առավել բարձր աստիճան»***[4]:

Նույն որոշման մեջ ՄԻԵԴ-ը կարևորել է նաև արտահայտվելու ազատության իրավունքը, նշելով. ***«Այս ազատությունը կիրառելի է ոչ միայն այնպիսի «տեղեկությունների» կամ «գաղափարների» նկատմամբ, որոնք բարյացակամորեն կամ անտարբերությամբ են ընդունվում կամ համարվում են անվնաս, այլև այնպիսիների, որոնք վրդովեցուցիչ, ցնցող կամ անհանգստացնող են: Դա է բազմակարծության, հանդուրժողականության և լայնախոհության թելադրանքը, առանց որի չկա «ժողովրդավարական հասարակություն»***:

Երբեմն օրենքներով, այլ իրավական ակտերով հնարավոր չէ բոլոր խնդիրներին լուծում տալ: Ազատ խոսքը պետք է ինքնակարգավորվող լինի: Ինքնակարգավորումն էլ ժամանակի հարց է, իսկ մինչ այդ յուրաքանչյուր մարդ իր հասցեին գրված քննադատությունը կարող է որակել որպես զրպարտություն կամ վիրավորանք՝ փորձելով ճնշել ազատ խոսքը:

Գրիշա Բալասանյան
ՀՀ փաստաբանների պալատի
երիտասարդական խորհուրդ

[4] Լինգենսն ընդդեմ Ավստրիայի (Lingens v. Austria) , 1986թ.